



# Saint Yeghiche Armenian Church Parish Սբ Եղիշէ Չայոց Եկեղեցւոյ Ծուխ

Priest in Charge Rev Fr Nshan Alaverdyan  
13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB  
Pastoral office t. +44 (0)20 7373 8133 email. [info@styeghiche.org.uk](mailto:info@styeghiche.org.uk)  
[www.styeghiche.org.uk](http://www.styeghiche.org.uk) <https://www.facebook.com/StYeghiche>

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԵՐԿԼԵՉՈՒ ԹԵՐԹԻԿ - SUNDAY BILINGUAL BULLETIN

1: Today's Scripture Reading,

30th March 2025

Bulletin 14/2025

## Fifth Sunday of Great Lent—The Judge

### ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՍԷ ՓԻԼԻՊՊԵՑԻՆԵՐՈՒՆ ԳՐՈՒԱԾ ՆԱՍԱԿԷՆ 3:1-4:9

#### Փրկութեան ճշմարիտ ճանապարհը

Հետևաբար, եղբայրներս, Տիրոջնով ուրախացէք: Նոյն բաները գրելը ինձի համար ձանձրոյթ չէ, բայց ձեզ ճշմարտութեան մէջ կը հաստատեմ:

Զգուշացէք այն մարդոցմէ, այն շուներէն, որոնք չարիք կը սերմանեն՝ ստիպելով որ թլփատուիք: Իսկական թլփատուածները մե՛նք ենք, որովհետեւ Աստուծոյ Հոգիով լեցուած պաշտամունք կը կատարենք եւ միայն Քրիստոս Յիսուսի միացած ըլլալով կը պարծենանք, եւ ո՛չ թէ Օրէնքին գործադրութեամբ կամ Աբրահամի մարմնաւոր գաւակը ըլլալով: Եթէ ատոնք բաւարար ըլլային փրկուելու համար, ինձի ոչինչ պիտի պակսէր. եւ եթէ ոեւէ մէկը կը կարծէ թէ մարմնական այդ կապին կրնայ վստահիլ, ես աւելիով կրնամ, քանի ութօրեայ թլփատուած Իսրայէլացի մըն եմ, Բենիամինի ցեղէն, գտարին Եբրայեցի եւ օրինապահ Փարիսեցի: Այնքան նախանձախնդիր էի, որ Քրիստոսի եկեղեցին կը հալածէի. եւ արդար էի այնքան՝ որքան Օրէնքին անթերի գործադրութիւնը կրնար տալ: Սակայն այս բոլորը, որ ժամանակ մը առաւելութիւն կը սեպէի, հիմա վնաս կը համարեմ՝ Քրիստոսի սիրոյն համար: Եւ իրաւ, ամէն ինչ վնաս կը համարեմ՝ համեմատած այն գերազանց շահին հետ, որ մեր Տէրը՝ Յիսուս Քրիստոսը ճանչնալն է: Այդ գիտութիւնը ունենալու համար՝ ամէն ինչ թողոցի, ոչնչութիւն սեպելով, որպէսզի Քրիստոսը շահիմ, եւ կատարելապէս անոր միանամ: Այնպէս որ, իմ արդարութիւնս այլեւս Օրէնքի գործադրութենէն չի՛ գար, այլ՝ Քրիստոսի հանդէպ ունեցած հաւատքէս, եւ այդ արդարութիւնը Աստուծմէ եկած արդարութիւնն է, հիմնուած՝ հաւատքի վրայ: Հիմա միակ փափաքս է՝ ճանչնալ Քրիստոսը, անոր յարութեան գօրութիւնը, եւ անոր չարչարանքներուն մասնակից դառնալ՝ անոր մահուան օրինակը իմ վրաս առնելով, որպէսզի ես ալ արժանի ըլլամ մեռելներէն յարութիւն առնելու:

#### Յառաջ՝ դէպի նպատակակէտ

Չեմ ըսեր թէ արդէն յաջողած եւ կատարելութեան հասած եմ, բայց հասնելու կը ձգտիմ, որովհետեւ ճիշդ ատոր համար Քրիստոս Յիսուս գիս պահեց: Եղբայրներ, ինքզինքս դեռ կատարելութեան հասած չեմ համարեր. բայց կ'աշխատիմ անցեալը մոռնալ եւ գալիքին նայիլ, եւ ուշադիր կերպով կը վազեմ դէպի նպատակակէտը, իբրեւ մրցանակ ստանալու համար յաւիտենական կեանքը, որուն կը հրաւիրէ մեզ Աստուած, Քրիստոս Յիսուսով:

Արդ, մենքոր կատարեալ ենք՝ նոյն ձեւով խորհիմք: Իսկ եթէ դուք որոշ կէտերու շուրջ տարբեր կը խորհիք, Աստուած ինք ձեզ պիտի յուսաբանէ: Ամէն պարագայի, միասնաբար քալենք այն կանոններով, որոնցմով ընթացանք մինչեւ հիմա:

Եղբայրներ, ինձի՛ նմանեցէք, եւ հետևեցէք անոնց՝ որոնք ձեզի տուած մեր օրինակով կ'ընթանան: Որովհետեւ, ինչպէս յաճախ կ'ըսէի եւ հիմա եւս լալով կ'ըսեմ, մեր մէջ կան շատեր՝ որոնց կեանքը թշնամանք է Քրիստոսի խաչին: Անոնց վերջը կորուստ է,

#### Our Aim;

St Yeghiche Armenian Church aims to be the church for the whole community; a place where those who have faith and those who yet to find it or renew it, can come together as a family of God's children; a place where all will be received with tolerance, understanding and friendship.

## 2: A short interpretation of the Scripture reading

որովհետև իրենց Աստուածը իրենց փորն է: Ամօթալի բաներով կը հպարտանան եւ միայն երկրաւոր բաներու մասին կը խորհին: Մենք, սակայն, երկինքի քաղաքացիներ ենք եւ հոնկէ՛ կը սպասենք որ գայ մեր Փրկիչը՝ Տէր Յիսուս Քրիստոս, որ մեր մահկանացու մարմինները պիտի կերպարանափոխէ եւ իր մարմինին պէս փառաւոր դարձնէ իր գօրութեամբը, որով կրնայ ամէն ինչ իր իշխանութեան ենթարկել:

### **Ուրախ ըլլալու յորդոր եւ թելադրութիւններ**

Ուստի, սիրելի եւ կարօտալի եղբայրներ, դուք՝ որիմ ուրախութիւնս էք եւ պսակս, այսպէս ամբօրէն Տիրոջ միացած մնացէք, սիրելիներ:

Եւողիպային ու Սինտիքին կ'աղաչեմ, եւ կը թելադրեմ՝ որ իրարու հետ հաշտուին, քանի Տիրոջ միացած են: Դ՞ո՛ւն ալ, ո՛վ հաւատարիմ լծակիցս, կը խնդրեմ որ օգնես այս երկու կիներուն, որովհետև ինձի հետ պայքարեցան Աւետարանին տարածման համար, Կղեմէսի եւ միւս գործակիցներու հետ միասին, որոնց անունները կեանքի գիրքին մէջ արձանագրուած են:

Միշտ ուրախ եղէք Տիրոջմով. դարձեալ կ'ըսեմ՝ ուրախ եղէք: Բոլորին հանդէպ ազնիւ եղէք: Շուտով Տէրը կու գայ: Ուել բան թող չմտահոգէ՛ ձեզ. այլ միշտ ձեր աղօթքներուն եւ աղաչանքներուն մէջ գոհաբանութեամբ Աստուծմէ խնդրեցէք ինչ բանի որ կարիքը կը զգաք, եւ այն ստեն Աստուծոյ խաղաղութիւնը, որ միտքով կարելի չէ հասկնալ, խաղաղ պիտի պահէ ձեր սիրտերն ու միտքերը, որոնք Քրիստոս Յիսուսի միացած են:

Ի վերջոյ, եղբայրներ, խորհեցէք այն բաները՝ որոնք ճշմարիտ են, պարկեշտ, արդար, մաքուր, սիրելի, բարեհամբաւ, առաքինի եւ զովելի: Եւ գործքով կատարեցէք այն՝ ինչ որ ինձմէ սորվեցաք եւ ընդունեցիք, ինձմէ լսեցիք եւ իմ վրաս տեսաք. եւ Աստուած, որ խաղաղութիւն կու տայ, ձեզի հետ պիտի ըլլայ:

### **The Epistle of St Paul to the Philippians Chapter: 3:1-4:9;**

Finally, my brethren, rejoice in the Lord. To write the same things to you, to me indeed is not grievous, but for you it is safe.

Beware of dogs, beware of evil workers, beware of the concision. For we are the circumcision, which worship God in the spirit, and rejoice in Christ Jesus, and have no confidence in the flesh. Though I might also have confidence in the flesh. If any other man thinketh that he hath whereof he might trust in the flesh, I more: Circumcised the eighth day, of the stock of Israel, of the tribe of Benjamin, an Hebrew of the Hebrews; as touching the law, a Pharisee; Concerning zeal, persecuting the church; touching the righteousness which is in the law, blameless. But what things were gain to me, those I counted loss for Christ. Yea doubtless, and I count all things but loss for the excellency of the knowledge of Christ Jesus my Lord: for whom I have suffered the loss of all things, and do count them but dung, that I may win Christ, And be found in him, not having mine own righteousness, which is of the law, but that which is through the faith of Christ, the righteousness which is of God by faith: That I may know him, and the power of his resurrection, and the fellowship of his sufferings, being made conformable unto his death; If by any means I might attain unto the resurrection of the dead.

Not as though I had already attained, either were already perfect: but I follow after, if that I may apprehend that for which also I am apprehended of Christ Jesus. Brethren, I count not myself to have apprehended: but this one thing I do, forgetting those things which are behind, and reaching forth unto those things which are before, I press toward the mark for the prize of the high calling of God in Christ Jesus.

Let us therefore, as many as be perfect, be thus minded: and if in any thing ye be otherwise minded, God shall reveal even this unto you. Nevertheless, whereto we have already attained, let us walk by the same rule, let us mind the same thing.

Brethren, be followers together of me, and mark them which walk so as ye have us for an

### **Dear Parishioners and Armenian Community Members:**

The Sunday collection plate circulating during Divine Liturgy is for all to contribute each Sunday in order to have a thriving church. Your donation, participation and support is vital, not only by attending the church but also with your time and financial contribution to our church. Please be generous in order for us to keep the doors open and provide all the services.

example. (For many walk, of whom I have told you often, and now tell you even weeping, that they are the enemies of the cross of Christ: Whose end is destruction, whose God is their belly, and whose glory is in their shame, who mind earthly things.) For our conversation is in heaven; from whence also we look for the Saviour, the Lord Jesus Christ: Who shall change our vile body, that it may be fashioned like unto his glorious body, according to the working whereby he is able even to subdue all things unto himself.

Therefore, my brethren, dearly beloved and longed for, my joy and crown, so stand fast in the Lord, my dearly beloved.

I beseech Euodias, and beseech Syntyche, that they be of the same mind in the Lord. And I intreat thee also, true yokefellow, help those women which laboured with me in the gospel, with Clement also, and with other my fellow labourers, whose names are in the book of life.

Rejoice in the Lord always: and again I say, Rejoice. Let your moderation be known unto all men. The Lord is at hand. Be careful for nothing; but in every thing by prayer and supplication with thanksgiving let your requests be made known unto God. And the peace of God, which passeth all understanding, shall keep your hearts and minds through Christ Jesus.

Finally, brethren, whatsoever things are true, whatsoever things are honest, whatsoever things are just, whatsoever things are pure, whatsoever things are lovely, whatsoever things are of good report; if there be any virtue, and if there be any praise, think on these things. Those things, which ye have both learned, and received, and heard, and seen in me, do: and the God of peace shall be with you.

### **ՅԻՍՈՒՍ ԲՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 17:20-18:14**

#### **Աստուծոյ թագաւորութեան գալուստը (Մտ 24.23-28,37-41)**

Փարիսեցիներ Յիսուսի հարցուցին, թէ ե՞րբ պիտի գայ Աստուծոյ թագաւորութիւնը: Անիկա պատասխանեց.

– Աստուծոյ թագաւորութիւնը արտաքնապէս տեսանելի նշաներով պիտի չգայ. կամ պիտի չըսեն թէ «Ահա հոս է կամ հոն», որովհետեւ ահա Աստուծոյ թագաւորութիւնը ձեր մէջ կը գտնուի:

Այա իր աշակերտներուն ըսաւ.

– Ժամանակ պիտի գայ, երբ դուք պիտի ցանկաք Մարդու Որդիին այս օրերէն մէկը տեսնել, բայց պիտի չտեսնէք: Եւ եթէ ձեզի ըսեն՝ «Ահա հոս է կամ հոն», մտիկ մի՛ ընէք, մի՛ հետեւիք անոնց: Որովհետեւ՝ ինչպէս կայծակը փայլատակելով կը լուսաւորէ երկնակամարին մէկ կողմէն մինչեւ միւսը, նոյնպէս պիտի ըլլայ Մարդու Որդին իր գալստեան օրը: Սակայն նախ պէտք է որ անիկա շատ չարչարանքներ կրէ եւ մերժուի այս սերունդէն: Եւ ինչպէս որ Նոյի ժամանակ Աստուծոյ պատիժը յանկարծակի վրայ հասաւ, նոյնպէս պիտի պատահի Մարդու Որդիին օրերուն ալ: Անոնք ալ կ’ուտէին, կը խմէին, այր կամ կին կ’առնէին, մինչեւ այն օրը, երբ Նոյ տապան մտաւ, եւ ջրհեղեղը եկաւ բնաջնջեց զանոնք: Կամ ինչպէս Ղովտի օրերուն պատահեցաւ. կ’ուտէին, կը խմէին, կը գնէին, կը ծախէին, կը տնկէին ու կը շինէին. բայց այն օրը որ Ղովտ Սոդոմը ձգեց, երկինքէն կրակ ու ձծուճը տեղաց եւ բնաջնջեց բոլորը: Նոյնը պիտի պատահի այն օրը, երբ Մարդու Որդին յայտնուի:

Այդ օրը, ան որ տանիք ելած է՝ թող վար իջնելով տուն չմտնէ՝ հոն գտնուող իր գոյքերը առնելու համար: Նոյնպէս, ան որ դաշտին մէջ է՝ թող տուն չվերադառնայ ունեցածները առնելու համար: Յիշեցէ՛ք Ղովտի կնոջ պարագան: Ով որ կը ջանայ իր կեանքը փրկել՝ պիտի կորսնցնէ զայն, եւ ով որ կորսնցնէ իր կեանքը՝ պիտի փրկէ զայն:

Կ’ըսեմ ձեզի, այդ գիշեր եթէ մէկ անկողինի մէջ երկու հոգի ըլլան՝ անոնցմէ մէկը պիտի առնուի եւ միւսը ձգուի, կամ եթէ երկու կին միասին ցորեն կ’աղան՝ անոնցմէ մէկը պիտի առնուի եւ միւսը ձգուի, կամ եթէ արտին մէջ երկու հոգի ըլլան, անոնցմէ մէկը պիտի առնուի եւ միւսը ձգուի:

Աշակերտները հարցուցին Յիսուսի.

– Տէ՛ր, ո՞ր պիտի պատահի ասիկա:

Անիկա պատասխանեց.

– Անգղները կը հաւաքուին հոն՝ ուր դիակ կայ:

**Safeguarding and Health and Safety issues are taken seriously by Saint Yeghiche Armenian Church, copies of the policy document are available for view, for any related issues please report or contact members of the parish council.**

## **Այրի կնոջ եւ դատաւորին առակը**

Յիսուս առակ մը պատմեց իր աշակերտներուն, ցոյց տալու համար թէ պէտք է միշտ աղօթել՝ առանց վիատելու: Եւ ըսաւ.

– Բաղաքի մը մէջ դատաւոր մը կար, որ ո՛չ Աստուծմէ կը վախնար եւ ո՛չ ալ մարդոցմէ կ'ամչնար: Նոյն քաղաքին մէջ այրի կին մըն ալ կար, որ անոր կը դիմէր եւ կը խնդրէր. «Իրաւունքս պաշտպանէ հակառակորդէս»: Դատաւորը երկար ժամանակ մերժեց դատը տեսնել, սակայն ի վերջոյ ըսաւ ինքնիրեն. «Թէեւ Աստուծմէ չեմ վախնար եւ մարդոցմէ չեմ ամչնար, բայց քանի այս այրին նեղութիւն կու տայ ինձի, իր դատը տեսնեմ, որպէսզի մինչեւ վերջ քովս գալով զիս չանհանգստացնէ»:

պա Տէրը շարունակեց.

– Լսեցէք թէ ի՛նչ կ'ըսէ անիրաւ դատաւորը: Իսկ Աստուած որքա՛ն պիտի համբերէ իր ընտրեալներուն կրած անիրաւութեան. պիտի չպաշտպանէ՞ զանոնք, որոնք զիշեր ու ցերեկ իրեն կը դիմեն: Այո՛, կ'ըսեմ ձեզի՝ որ անոնց իրաւունքը անմիջապէս պիտի պաշտպանէ: Բայց Մարդու Որդին երբ գայ, արդեօք հաւատք պիտի գտնէ՞ երկրի վրայ:

## **Փարիսեցիին եւ Մաքսաւորին առակը**

Այս առակն ալ պատմեց անոնց, որոնք իրենք իրենց համար այն համարումը ունէին թէ արդար են եւ ուրիշները կ'արհամարհէին:

– Երկու հոգի տաճար գացին աղօթելու. մէկը՝ Փարիսեցի, միւսը՝ մաքսաւոր: Փարիսեցին մէկ կողմ կեցած, ինքնիրեն կ'աղօթէր. «Աստուած իմ, շնորհակալ եմ քեզմէ՝ որ ուրիշ մարդոց նման՝ յափշտակող, անիրաւ, շնացող չեմ, կամ այս մաքսաւորին պէս ալ չեմ: Այլ՝ շաբաթը երկու անգամ ծոմ կը պահեմ եւ ամբողջ եկամուտիս տասանորդը տաճարին կու տամ»: Իսկ մաքսաւորը հեռուն կեցած, աչքերը առանց վեր բարձրացնելու՝ կուրծքը կը ծեծէր եւ կ'ըսէր. «Աստուած, ներէ՛ մեղաւորիս մեղքերը»:

– Կ'ըսեմ ձեզի,– եզրակացուց Յիսուս,– մաքսաւորն է որ արդարացած տուն գնաց, եւ ո՛չ թէ Փարիսեցին. որովհետեւ ով որ իր անձը կը բարձրացնէ՝ պիտի խոնարհի, եւ ով որ իր անձը խոնարհեցնէ՝ պիտի բարձրանայ:



Jesus teaching the twelve

## **The Holy Gospel of Jesus Christ according to Luke Chapter: 17:20-18:14**

### **Jesus talks about the time when God will rule**

Then some Pharisees asked Jesus a question. ‘When will the kingdom of God begin here?’ Jesus replied, ‘When God begins to rule here, people will not see it with their eyes. Nobody will say, “Look everyone! God is ruling here,” or “Look! God is ruling over there.” No, it is not like that. God is already ruling in the lives of his people.’

Jesus said to his disciples, ‘The time will come when you will very much want to see me, the Son of Man, return to the earth. But you will not see that day. People may say to you, “Look, there he is!” or “Here he is!” But do not go out with them to look. When lightning shines, it quickly makes the whole of the sky light from one side to the other. It will be like that on the day when the Son of Man returns. But before this happens, the people of today will refuse to accept me. And I will feel much pain.

Remember what happened when Noah was alive. It will be like that at the time when the Son of Man returns to the earth. In Noah's time, people were eating their meals every day. Men and women continued to marry. They continued to do all this until the day when Noah went into his boat. Then it rained for a long time and there was deep water everywhere. The water killed all the people.

The same kind of thing happened when Lot was alive. People in the city of Sodom were eating their meals every day. They were buying and selling things. They were planting their seeds and they were building their houses. But one day Lot went away from Sodom. On that same day, God caused it to rain fire and burning stones from the sky. This killed all the people in Sodom.

It will happen quickly like that, on the day when I, the Son of Man, show myself clearly. On that day, a person who is up on the roof of his house must not go back down into the house. He must not get his things that are inside the house to take with him. In the same way, people that are working outside in their fields must not go back to their homes. Remember what happened to Lot's wife.


Whoever wants to keep his own life safe will lose it. But whoever gives his life to serve me will have true life. I tell you this. At that time, two men will be sleeping in one bed. God will take one of them away but he will leave the other man behind. Two women will be preparing food together in the same place. God will take one of them away but he will leave the other one behind.'

Jesus' disciples asked him, 'Where will this happen?' Jesus replied, 'If a dead body is lying somewhere, vultures will come together in that place.'

### **The Parable of the Persistent Widow**

Then Jesus told his disciples a story. He wanted to teach them that they must go on praying always. They must not get tired. He said to them, 'In a certain city, there was a judge. He was not afraid of God. He did not respect people.'

A woman lived in that same city. Her husband had died. She came to the judge many times with a problem. "Somebody is doing bad things against me. Please keep me safe from that person," she was saying. For a long time, the judge would not do anything to help her. Later, he thought, "I am not afraid of God. Nor do I respect people. But this woman causes me trouble. If I do not do anything for her, she will continue to come to me again and again. She will make me ill. So I will help her to be safe. I will say that she is right."



Jesus then said, 'This judge was not a good man. But you should think about what he said. He helped the woman because she caused him trouble. But as for God, he always helps those that he has chosen to be his children. When they continue to ask him for help, in the day and in the night, he will answer them. He will not wait. I tell you this. He will show that they are right. He will help them quickly. I, the Son of Man, will return to earth. But will I find many people that still believe in me then, or not?'

### **Jesus tells a story about two men who were praying**

Jesus told a story to teach other people. These people thought that they were very good in front of God. They thought that they were much better than other people.

Jesus said, 'One day, two men went into the temple to pray. One man was a Pharisee. The other man took taxes from people. The Pharisee stood there by himself. He prayed like this: "Thank you, God, that I am different from all these other people. They are bad people. They rob other people. They have sex with women who are not their wife. Thank you, God, that I am not like this man who takes taxes on behalf of the government. I fast for two days of each week. I give to you one tenth of all the things and money that I receive."

But the other man stood far away. He would not even look up towards heaven. He was hitting his body with his hands to show how sorry he was. He prayed like this: "Please, God, be kind to me. I have done many bad things."

Jesus then said, 'Let me tell you about these men when they went home. The man that took taxes from people was now right with God. But the Pharisee was still guilty. Some people lift themselves up to be important. But God will bring all of them down low. Other people are humble. God will lift up those people to a good place.'

## **ՔԱՌԱՍՈՒՆ ՍՈՒՐԲ ՄԱՆԿԱՆՑ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅԱՆ ՕՐ**

4-րդ դարի սկզբին նահատակված 40 վկաները Փոքր Հայքի տարբեր քաղաքներից էին և զինվորական ծառայության մեջ էին Սերաստիա քաղաքի կայսերական գնդում: Երբ Լիկիանոս կայսեր հրամանով Կեսարիայի դուքս Լյուսիասը հարցաքննում է զինվորներին՝ բանակում քրիստոնյաներ հայտնաբերելու նպատակով, նրանցից 40-ը, հավատարիմ իրենց հավատին, անվեհեր պատասխաններով դատավորների գայրույթն են առաջացնում և բանտարկվում: Չմեռային մի ցուրտ գիշեր նրանց նետում են Սերաստիա քաղաքի մոտ գտնվող լիճը: 40-ից միայն մեկը չի կարողանում դիմանալ տանջանքներին: Դուքս ելնելով սառցակալած ջրից, նա փորձում է փրկություն գտնել լճափին կառուցված տանը, սակայն կնքելով մահկանացուն, զրկվում է թե՛ երկրային, թե՛ երկնային կյանքից: Լուսադեմին մյուս բոլոր նահատակները երևում են լուսե պսակներով զարդարված: Պահապան զինվորներից



մեկը, տեսնելով այդ, լցվում է հավատով և նետվելով լիճը, պսակակից է դառնում նրանց: Աստվածային հրաշքով ձմեռային սառնամանիքին դիմակայած վկաներն առավոտյան նահատակվում են: Նրանց նշխարներն ամփոփվում են Սեբաստիայում, որտեղ և հետագայում կառուցվում է «Քառասուն մանկունք» 40-գմբեթանի տաճարը, որ կանգուն է եղել մինչև Լենկթեմուրի արշավանքը: 40 մանկանց պատմությունը հորդորում է կյանքի բոլոր դժվարությունների մեջ հավատարիմ մնալ Քրիստոսին, հաղթահարել դյուրահանգ գայթակղությունները՝ երկնային պսակին արժանանալու համար:

## **COMMEMORATION OF THE FORTY HOLY MARTYRS**

The Forty Holy Martyrs martyred in approximately 320 AD were Christians from various towns and cities of Lesser Armenia. They served as soldiers in the royal regiment of Sebastia. Upon the decree of Roman Emperor Likianos, interrogations were organized by Lucias, Duke of Caesarea, to reveal the Christian soldiers. Forty of the soldiers remain steadfast in their faith, defy the judges by their brave answers, and are imprisoned. One cold winter night the soldiers are thrown into a lake near Sebastia, to freeze them to death. Only one of the forty soldiers, being unable to endure the torments, comes out of the water, and tries to find salvation in a bathhouse built on the bank. The lone soldier dies and becomes deprived of both earthly and heavenly life.

At dawn, halos are seen encircling the heads of the soldiers. One of the guards charged with the execution of the forty, witnessing the holy phenomenon accepts Christ and throws himself into the lake to be martyred along with the others. In the morning it becomes apparent that through a divine miracle, the forty soldiers have been saved from freezing. This infuriates their captors who execute them and thus, they become martyrs. The martyrs' remains are buried in Sebastia, where subsequently a Forty-domed Cathedral is built. The Cathedral of Sebastia stood for nearly one thousand years until the invasion of Tamerlane and the Mongols at the end of the 14th Century. The name of the "Forty Martyrs Cathedral" has survived to this day.

## **ԴԱՏԱՎՈՐԻ ԿԻՐԱԿԻ**

Մեծ պահքի հինգերորդ կիրակին կոչվում է Դատավորի: Այս օրվա խորհուրդը բացատրում է այրի կնոջ և դատավորի մասին առակը (Դուկ. 18:1-5): Ըստ առակի՝ մի այրի կին, անընդհատ խնդրում է Աստուծուց չերկնչող և մարդկանցից չվախեցող դատավորին իր դատն անել: Դատավորը կնոջից ազատվելու համար ստիպված բավարարում է նրա պահանջը: Այս առակը պատմելուց հետո Քրիստոս հավաստիացնում է բոլորին, որ եթե անարդար դատավորն այրի կնոջ դատը տեսավ, ապա Աստված առավել ևս կկատարի բոլոր նրանց խնդրանքները, ովքեր միշտ աղոթքով խնդրում են:

Առակը հորդորում է ամեն ժամ աղոթել, ինչը խորհրդանշում է հոգու մշտական մղումն առ Աստված, բայց միևնույն ժամանակ իրական աղոթքի կոչ է: Առակը պատմելուց հետո Քրիստոս ասում է. «Իսկ երբ մարդու Որդին գա, արդյո՞ք երկրի վրա հավատ կգտնի» (Դուկ. 18:8): Առակում Հիսուս տալիս է երկրորդ գալստյան գաղափարը: Տիրոջ բառերի մեջ տխրություն ու թախիժ է զգացվում: Փրկչի համար ցավալի է, որ շատ մարդիկ կարող են ենթարկվել անեղ դատաստանի՝ արքայության ժառանգորդներ լինելու փոխարեն:

## **SUNDAY OF THE JUDGE**

The fifth Sunday of Great Lent is called the Sunday of the Judge. The message of the day teaches us with the parable of the widow and the Judge. This parable comes to us in the Gospel of St. Luke (Luke 18:1-8). The parable tells the story of a widow who repeatedly came to a judge, who neither feared God nor respected man, and pled for her rights. For a long period of time the judge refused to act, but in the end, he fulfilled her request, to put an end to her continuous appeals. Otherwise, he feared that she would continue to return indefinitely.

After telling this parable, the Lord assures everyone, that if a man as corrupt and unfair as this judge decided in favor of the widow, then God surely would judge in favor of his own people and grant the requests of all those who submit to Him through prayer. This parable exhorts us to always and continually pray, as prayer symbolizes the soul's eternal striving and thirst for God. The parable also contains an appeal from Christ. After telling the parable, Christ says: "But will the Son of Man find faith on earth when He comes?" In His words, Jesus gives a reference to the Second Coming, and sadness and anguish are felt in the Lord's remark. It is truly painful for the Savior that many people may be subject to just, yet cruel judgment, instead of becoming the inheritors of the Kingdom of God.



# St Yeghiche Armenian Church Parish

## Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծովի

Registered Charity No 1173403

St Yeghiche Armenian Church Parish Ltd, 13b Cranley Gardens, Kensington London SW7 3BB

t.+44 20 7373 8133 e. [info@styeghiche.org.uk](mailto:info@styeghiche.org.uk) f. <https://www.facebook.com/StYeghiche> w. [www.styeghiche.org.uk](http://www.styeghiche.org.uk)



### Holy week Timetable at St Yeghiche Armenian Church

#### Սբ. Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ժամանակացոյցն Ամբ Ծաբաթով 2025

- |                        |   |                              |
|------------------------|---|------------------------------|
| <b>Palm Sunday</b>     | <b>ԾԱՂԿԱԶԱՐԴ</b>  | <b>13<sup>th</sup> April</b> |
| <b>11:00</b>           | Divine Liturgy / Սուրբ Պատարագ  |                              |
| <b>1:30</b>            | Opening of the Doors / Դռնբացէք   |                              |
| <b>Maundy Thursday</b> | <b>ԱԲԱԳ ՀԻՆԳՇԱԲԹԻ</b>   | <b>17<sup>th</sup> April</b> |
| <b>17:30</b>           | Washing of the Feet / Ոտնլուսայ   |                              |
|                        | <b>We encourage parents to register the names of their boys with the Priest and Parish Council Members for this act.</b>  |                              |
| <b>19:30</b>           | Grand Vigil Betrayal Service/ Խաւարում  |                              |
| <b>Good Friday</b>     | <b>ԱԲԱԳ ՈՒՐԲԱԹ</b>  | <b>18<sup>th</sup> April</b> |
| <b>16:00</b>           | Evening Burial Service /<br>Կարգ Թաղման Յիսուսի Զրիստոսի<br>Procession around the Church.   |                              |
| <b>Holy Saturday</b>   | <b>ՃՐԱԳԱԼՈՅՑԻ Սբ. ՊԱՏԱՐԱԳ</b>   | <b>19<sup>th</sup> April</b> |
| <b>15:00</b>           | Scripture readings/ Ճաշու ընթերցումներ  |                              |
| <b>16:30</b>           | Eucharist and Holy Communion/ Բուն Պատարագ  |                              |
| <b>18:30</b>           | Blessing of home / Տնօրհնէք   |                              |
| <b>Easter Sunday</b>   | <b>ՉԱՏԻԿ. Սբ. ՅԱՐՈՒԹԻԲԵՆ</b>  | <b>20<sup>th</sup> April</b> |
| <b>11:00</b>           | Episcopal Divine Liturgy .<br>Եպիսկոպոսական Սբ. Պատարագ<br>(Պատարագիչ՝ տ. Յովակիմ եպս. Մանուկեան)   |                              |
| <b>Monday</b>          | <b>ՄԵՌԵԼՈՑ</b>  | <b>21<sup>st</sup> April</b> |
| <b>11:00 – 14:00</b>   | Blessing of the Graves / Այցելութիւն գերեզմանատուն<br>A clergy will be available at Gunnersbury Cemetery to<br>conduct individual prayers. If you require prayers at any<br>other cemetery, please contact us to arrange with the Clergy. |                              |

### 3: This week's message from our Priest in Charge

#### Մեկնութիւն եւ հոգեւոր պատգամ Աւետարանի այս օրուայ ընթերցումից.

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Մի առակ էլ ստաց նրանց այն մասին, թէ նրանք ամէն ժամ պէտք է աղօթեն ու չձանձրանան» (Ղուկ. 18:1):

Քրիստոսով սիրեցեալ եղբայրներ եւ քոյրեր,

Հինգերորդ շաբաթն է, որ Մեծ Պահքի ճամփորդ ենք եւ Յարութեան ուխտաւորներ: Ուխտի այս երկար ճանապարհին այս կիրակիի հոգեւոր սնունդը աղօթքի մասին խոկումն է: Եկեղեցին ժողովրդի լեզուով Դատաւորի կիրակի է կոչել՝ համաձայն աւետարանական առակի: Թերեւս աւելի Աղօթքի կիրակի կվայելէր անուանել, քանի որ Քրիստոս միւս՝ փարիսեցու եւ մաքսաւորի մասին պատմութեամբ էլ աղօթելով շեշտադրումն է անում: Բայց, ի վերջոյ, ոչ միայն Մեծ Պահքի, այլեւ բոլոր կիրակիներն ու անգամ բոլոր օրերը ԱՂՕԹ-Քի համար պիտի լինեն՝ որպէս կատարում «ամէն ժամ» Աստծոյ հետ խօսելու տերունական պատուերի:

Մեր ժամանակի արագ ռիթմով (rhythm) ապրող մարդկանց գուցէ եկեղեցու ծէսերը, աղօթքները, ժամերգութիւններն ու պատարագները երկար եւ ձանձրալի թուան: Շատերը գուցէ զարմանան, երբ իմանան, որ դրանք դեռ կրճատուած տարբերակներն են: Թերեւս էլ աւելի կլինի զարմանքը, երբ լսեն Աւետարանի առակը, որը Քրիստոս պատմեց ու պատգամեց Իր հետեւորդներին **“ամէն ժամ աղօթել”** ու **“չձանձրանալ”**:

Ամէն տարի մենք ընթերցում ենք այս երկու առակները՝ դրանց միջից փորձելով այսօրուայ աղօթական մեր կեանքի համար նոր յուշումներ քաղել: Ժամանակներն ու կենցաղը փոխուել են, բայց մենք՝ մարդիկս, չենք փոխուել: Հիմա էլ կան աւետարանական այս առակի դատաւորի, այրի կնոջ, փարիսեցու կամ մաքսավորի կերպարները մարմնաւորողներ՝ անշուշտ աւելի ժամանակակից ձեւի մէջ:

Այս անգամ փորձենք քրիստոսաւանդ այս առակներից վերցնել կերեւոր յուշումներ մեր ամէնօրեայ աղօթական կեանքի համար եւ հասկանալ՝ ինչպէս աղօթել եւ ինչ աղօթել.

Լինի եկեղեցում, թէ այլուր, աղօթելիս մեզ զգանք Աստծոյ առաջ, հոգու հայեացքն ուղղենք միմիայն Աստծուն եւ ուրիշ ոչ ոքի: Այրի կնոջ համար իր դատն է կենտրոնում. աշխարհը մէկ կողմ է, իր դատը՝ այլ: Նոյնը տեսնում ենք Քրիստոսի գովասանքին արժանացած մաքսավորի դէպքում, ով կանգնած է մեկուսի, աշխարհի առաջ փակ են մտքի, հայեացքի եւ լսելիքի դռները, չի տեսնում գրեթէ կողքին եղող փարիսեցուն:

Աստծոյ առաջ չպարծենալ, այլ փառք տալ Իր սիրոյ եւ ողորմութեան համար՝ բոլոր բարիքների հեղինակ դիտելով Աստծուն եւ ոչ մեզ:

Ամբողջ սրտով ներողութիւն եւ մեղայ ասել արուած սխալների եւ մեղքերի համար եւ յիշել, որ Աստուած սիրող եւ ներողամիտ Հայր է:

Մեզ փոքր աղօթքների սովորեցնել՝ օրուայ մէջ մտովի յաճախակի կրկնելով: Օրինակը տալիս է մաքսաւորը **«Աստուած, ների՛ր ինձ՝ մեղաւորիս»** (Ղուկ. 18:13) Արեւելեան քրիստոնէական եկեղեցիներ կեանքում յայտնի Յիսուսեան աղօթքի հիմքը սա է, որ հաւատացեալներն ու վանականներն ասում են Աստծոյ ամէն օր:

Հոգեւոր բաներ խնդրել եւ ոչ նիւթական, ինչպէս որ Տէրը սովորեցրեց ասելով՝ նախ խնդրեցէ՛ք Աստծոյ արքայութիւնն ու արդարութիւնը եւ մնացած ամէն բան Աստուած աւելիով կտայ:

Աղօթել հաշտութեան համար՝ արդար դատ ունենալու, արդարացուելու երագով: Աղօթքով մենք հաշտուում, վերամիաւորուում ենք Աստծո հետ:

Բոլորն են աղօթում, բայց բոլորը չէ, որ բարի պատասխան ունեն, ինչպէս որ սուրբգրային համեմատութիւնն է՝ բազում են կոչեցեալները, բայց քիչ են ընտրուածները, բոլորն են վազում, բայց ոչ բոլորն են հասնում յաղթութեան պսակին. **«Ասում եմ ձեզ, սա՛ իշտա իր տունը արդարացած, ոչ թէ միւսը»** (Ղուկ. 18:14):

Աղօթելիս յիշենք, որ մարդկային եւ աստուածային դատաստանները տարբեր են. մարդկայինի դէպքում յաղթում է նա, ով բարձր է եւ բարձրացնում է իր անձը դրամով, փաստաբաններով, կապերով եւ մարդկային հնարանքներով: Իսկ Աստծոյ համար սիրելի է խոնարհը՝ **«սիրտ սուրբ եւ զհոգի խոնարհ Աստուած ոչ արհամարհէ»** (Սղմ. 50.): Երբ խոնարհեցնում ենք մեր անձերը, թոյլ ենք տալիս, որ մարդկանց բարձրացնելու համար երկնքից խոնարհուած Փրկիչը մեզ էլ կբարձրացնի, Իր սիրելիների հետ բազմեցնի

բարձունքներում՝ փառքի լոյսի մէջ: Դրա համար է Տէրը այս ամբողջը եզրափակում թեւաւոր դարձած այս խօսքով. «*ույ՛ որ բարձրացնում է իր անձը, կը խոնարհուի, եւ ույ՛ որ խոնարհեցնում է իր անձը, կը բարձրացուի*» (Դուկ. 18:14):

Եկեղեցին Աստծոյ մեծ գաւիթն է, ուր հոգու կերակրի՝ աղօթքի համար է ժողովուրդը գալիս՝ «ճարակ գտնելու»: Այստեղ՝ Աստծոյ Տան մէջ ջնջում, հալչում են սահմանները մեծահարուստի եւ չքաւորի, ազնուականի իշխանի եւ պարզ շինականի, քանի որ նրանց կապողն աստուածային սէրն է, Փրկիչ Աստծոյ կենարար Մարմինն ու Արիւնը:

Դա մարգարէութեան ի կատար ածումն է Քրիստոսի Եկեղեցու մէջ.

«Այնպէս պիտի լինի, որ դէռ նրանք ձայն չտուած՝ պիտի լսեմ նրանց, դէռ նրանք չխօսած՝ պիտի ասեմ, թէ՛ ի՛նչ էք ուզում: Այն ժամանակ գայլերն ու գառները միասին պիտի արածեն, եւ առիւծը, ինչպէս եզը, յարդ պիտի ուտի, օձը հող պիտի ուտի իբրեւ հաց» (Ես. 65:24-25):

Թող այս օրհնեալ եւ օրհնաբեր կիրակիին բոլորը մեկտեղուեն ապաշխարութեան, հաշտութեան եւ սիրոյ աղօթքների մէջ, եւ թող Տիրոջով հարթուեն բոլորը վեճերը:

Տէր Յիսուս Քրիստոսի շնորհը, Աստծու սէրը եւ Սուրբ Հոգու հաղորդութիւնը ձեզ հետ լինեն: Ամէն:

## Սբ Եղիշէի Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեան

### **DAILY BIBLE READINGS FOR 2025 According to the Lectionary of the Armenian Apostolic Church**

31 March Hebrews 1:1-14

1 April Isaiah 7:10-8:10

2 April Exodus 4:1-21; Joel 3:9-21

3 April Isaiah 53:1-54:5; 1 Corinthians 15:1-28

4 April Deuteronomy 10:1-15; Job 19:1-29; Isaiah 45:1-13

5 April St. Gregory the Illuminator—His Passion and Descent into the Pit

Wisdom 1:15-2:22; Micah 7:7-10; Philippians 1:12-21; Matthew 16:24-28

### **Thank you**

St Yeghiche Armenian Church Council would like to extend its gratitude to all members of our community who attended and supported the Great Lent Luncheon (Michink). Fr Nshan blessed the table and all who shared its bounty. A special thank you to our Ladies Guild for their hard work in preparing delightful and tasty offer of Armenian Lent dishes for the occasion.

### **Ծանօթութիւն.**

Մեծ Պահքի ամբողջ ընթացքում եկեղեցու խորանները փակ են՝ ի նշան դրախտից մարդկանց արտաքսման: Բացառութիւն են կազմում **ՍՈՒՐԲ ԳԸ. ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ՍՈՒՏՆ Ի ՎԻՐԱՊՆ** (Պահոց Զ. Կիրակիին նախորդող շաբաթ օրը), եւ **ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ԱԻԵՏՄԱՆ** (Ապրիլի 7), երբ պատարագին համար բացում են խորանները եւ պատարագի աւարտից անմիջապէս յետոյ կրկին փակում:

#### 4: Հոգեհանգիստ - Memorial Service

Rest of the soul service at St Yeghiche Armenian Church is requested:

By Zaza Balian, Avedis, Simon, Garo and Jennifer Poon Nersessian, for the soul of their Parents, the late **ARMENAG (ԱՐՄԷՆԱԿ) & YESTER NERSESSIAN (ԵՍԹԵՐ ՆԵՐՍԷՍԵԱՆ)**, also for all the old and new deceased members of **BALIAN (ԳԱԼԵԱՆ)** and **NERSESSIAN (ՆԵՐՍԷՍԵԱՆ)** Families.

By Isabel Basta Zoulikian and Family for the soul of their Grandmother who was also a loving Great-grandmother the late **VARTOUHI BEDROSSIAN** on the 1<sup>st</sup> anniversary of her passing, also for the soul of their Grandparents **PANOS BEDROSSIAN, ARISDAGES ZOULIKIAN** and **ZABEL SIMONIAN ZOULIKIAN**, also for their Father the late **HAROUTIOUN ZOULIKIAN**, and Aunt and Uncle **GENEVIEVE** and **SARKIS ZOULIKIAN** also for all the old and new deceased members of the **ZOULIKIAN, BEDROSSIAN, SIMONIAN, KHATCHERIAN** Families.

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

**Please Pray For Our Sick:** Please notify the Pastor whenever you know of anyone who is sick, whether at home or in the hospital. Let us pray for one another

#### General

***St Yeghiche Armenian Church is here to cater for all of your spiritual needs***  
Baptisms, Weddings, Baby Blessings, Home/Workplace Blessings, Seniors' Visitation, Hospitals/Home Visitation/Prayer, Funeral Service, Requiem, Grave Site Prayers, and more..

Please contact members of the Parish Council at Church every Sunday to request any of the above services. Alternatively, call Tel: 020 73738133 office, or write to Email: [serices@styeghiche.org.uk](mailto:serices@styeghiche.org.uk)

**Rev Fr Nshan Alaverdyan** is available to visit parishioners in the hospital, nursing homes, or home visitations. He is also available to conduct Home Blessings, administering Holy Communion, consultations and other sacramental needs. Please call the church office at 020 7373 8133 or Fr Nshan on 07548 777 147.

**Hokehankist Requests:** To request a requiem service and include details in our Sunday Bulletin, please contact us **before Thursday Evening**. Please contact Mr Viken Haladjian, or approach a member of Parish Council at church every Sunday after Badarak.

Tel: 020 7373 8133 office, 07970 146 280 mobile Email: [services@styeghiche.org.uk](mailto:services@styeghiche.org.uk)

**In Liu of Flowers:** Friends and family of the deceased can make donations, in memory of their loved ones, to St. Yeghiche Armenian Church General Operating Fund.

**Donations** for prayers and annual membership contributions, in support of church's annual expenses, are welcome. Donations can be made;

- By a cheque made payable to "St Yeghiche Armenian Church Parish",
- By electronic bank transfer to "St Yeghiche Armenian Church Parish Ltd"  
HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26
- By electronic card reader at the Church entrance.
- By QR Code directly to the Church PayPal or SumUp accounts.



St Yeghiche Armenian Church is a UK Registered Charity, Reg No 1173403.

Please complete a Gift Aid Form with your donation. Forms are available from Parish Council.

**Membership:** St Yeghiche Armenian Church Parish Council would like to invite members of the Armenian community to become registered members and take part in Parish activities. Become a dues paying member and let your voice be heard, be eligible to vote and be elected to one of Parish offices. Please contact a member of the Parish Council at the entrance desk of the Church or visit our website [www.styeghiche.org.uk](http://www.styeghiche.org.uk)